

ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ¹⁾

Հայտնի. — Միւս Հայաբնակ դաւաւների նման այս գաւառի Հայերն էլ սրանից մի-երկու տասնեակ տարի առաջ աւելի փոքր Հասակում էին ամուսնացնում իրենց գաւակներին. բաւական էր, որ աղջիկը 9—10, իսկ տղան՝ 12—13 տարեկան դառնար, որ նրանց «Հոգատար» ծնողները՝ առանց նոյն իսկ նրանց Համաձայնութիւնն առնելու՝ նշանէին ու պսակէին նրանց: Պատահում էր, որ խեղճ աղջիկներն ամուսնութեան մասին զաղափար անգամ չէին ունենում. այսպէս Չաւալեցի Եղիսաբէրդը, որ պսակուելիս տաս տարեկան է եղել, Հարսանիքի օրը փախել թողնում պաշ է մտել:

Այսպէս վաղ պսակելու նպատակում են այն Հանգամանքը, որ աղջկայ ծնողները աղքատ լինելով, աշխատում են կարելոյն չափ շուտ ազատուել մի գուտող բերանից, քանի որ իրենք անասուններ, Հող շատ չունենալով, կարօտ չեն նրա աշխատանքին, իսկ Հարուստ գերդաստանները, աշխատող ձեռքերի կարիք զգալով՝ կարելոյն չափ շուտ են ամուսնացնում իրենց տղաներին:

¹⁾ Որպէսզի Հնարաւորութիւն ունենայի ոչ թէ մի գիւղի, այլ Լօռու բոլոր բնիկ ժողովուրդների Հարսանեկան սովորութիւնները նկարագրելու, խնդրեցի մի քանի անձերի կամ ամբողջովին նկարագրել իրենց գիւղի Հարսանիքը և կամ իմ նկարագրութիւնը կարգաւոր նշանակել նման և տարբեր կէտերը. այս անձնաւորութիւնները, որոնց և յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը, Հետևեալներն են. Օձուն գիւղից՝ պ. Գ. Խարազեան. Աղարակից՝ պ. Բ. Տէր-Սահակեան. Վարդարուից՝ արժ. Ե. Զոհրաբեան. Զնոդից՝ պ. Բ. Մկրտումեան. Դսեղից՝ պ. Ս. Մամիկոնեան, իսկ Հաղբատի վերաբերութեամբ ի նկատի եմ ունեցել արժ. Գ. Երզնկեանի «Ոգգադրական Հանդիս» Գ. գրքի մէջ նկարագրած Հարսանիքը:

Այժմ ևս այս տխուր երևույթը շարունակուած է, թէպէտ և եկեղեցական օրէնքով արգելուած է: Սրինազանց քահանան օրինաւորուած է իւր արարմունքը մատենանում ամուսնացողներին պահանջուած տարիները նշանակելով: Այնպէս որ՝ եթէ մինը կամենայ այս մատենաներով դիտողութիւններ անել, մեծ սը-խայմունքների մէջ կրննի: Նոյն իսկ այն դէպքում, երբ կեղծելու ոչ մի կարելութիւն չկայ, տարիները մօտաւորապէս և ոչ ճիշտ են նշանակուած, որովհետև գիւղացիները չը-գիտեն ոչ իրենց և ոչ իրենց զաւակների տարիները, լիշում են միայն նրանց ծննդեան կամ մանկութեան ժամանակը, կապելով մի որևէ նշանաւոր անցքի հետ. օր. ասում են խո-լերի տարուայ տղան է, Ռուսը որ Ղարսն առաւ՝ հըլը ծիծ կուտէր և այլն:

Այժմ շնորհիւ այն հանգամանքի, որ նահապետական գեր-դաստանը քայքայուած է և կազմուած են փոքրիկ ընտանիք-ներ, այնպէս որ զինուոր գնացածի ընտանիքը չի շարունա-կուած այլևս ապրել ահագին գերդաստանի մէջ, ուր ամենայն հոգա-տարութիւն և հսկողութիւն անպակաս են. նաև շնորհիւ այն բանի, որ հետզհետէ բարոյականութիւնն ընկնում է, զգուշանում են զինուորական ծառայութիւնից ազատուելուց առաջ ամուս-նանալ, ուրեմն և այժմ սկսել են ամուսնաւալ միայն 21—25 տարեկան հասակում:

Սրա ազդեցութեամբ և՛ աղջիկները փոքր ինչ ուշ են ա-մուսնանում, 13—15 տարեկան հասակում: 18—20 տարեկան աղջիկը արդէն «տանը մնացած», «քացախած», «անբաղդ» և ծնողների համար նախատինք են համարուած և մեծ հոգս պատճառում:

Իսկ զինուորական ծառայութեան չենթարկուող, մի հա-տիկ կամ արատաւոր երիտասարդները շարունակուած են առաջ-ուայ նման վաղ՝ 16—18 տարեկան հասակում ամուսնանալ:

Ամուսնացողների հասակի համեմատութիւնը.—Ընդ-հանրապէս կարելի է ասել, որ ամուսնացող զոյգերի տղամարդոց հասակը բարձր է լինում կանանց հասակից, առաւելապէս 5—15 տարի: Զատ հազիւ է պատահում, որ մի աղջիկ ա-

մուսնանայ ալրի մարդու Հետ, որքան էլ վերջինս փոքրահասակ լինի. Հաղիւ է պատահում նաև, որ ալրի կինը չամուսնացած ամուսին գտնի, որքան էլ վերջինս մեծ Հասակ ունենայ:

Ամուսնացողների եւ նրանց ծնողների համաձայնութիւնը.

— Բնդհանրապէս մայրերն են Հարսնացուն ընտրում, բայց երբեմն էլ տան ազապ աղջիկներն և փոքր Հարսները մեծ գեր են խաղում այս խնդրում, ընտրելով իրենց ընկերուհիների միջից և միջնորդ Հանդիսանալով տղի և աղջկայ մէջ: Նկատուում է, որ ՀնոգՀետէ նշանակութիւն է տրւում. տղայի և մասամբ աղջկայ կամքին, մանաւանդ երբ սրանք Համեմատաբար աւելի մեծ Հասակ են ունենում, մինչդեռ առաջներն ամուսնացողների կողմից անամօթութիւն կը Համարուէր միջամտել այս խնդրում: Ուսուելապէս մայրը, հօր Համաձայնութեամբ վճռում էին և Հէնց այժմ էլ մեծ մասամբ որոշում են ամուսնացողի ապագան, ընտրելով մի ախպիսի կողակից, որ Համապատասխանէր իրենց վիճակին, — «Հալալ կաթնակեր» — լինէր: Այս վերջի կէտին գիւղացիները շատ մեծ նշանակութիւն են տալիս և նրանց մէջ տարածուած է այս առածը՝ Թէ «Մօրը տես՝ աղջկան առ, զրազը (եղբը) տես՝ կտան առ»:

Օրօրոցախաղ. — Պեռ մինչև այժմ էլ մնում է ախ տփորութիւնը, որ երկու լղի կանայք միմեանց շատ սիրելով և միմեանց Հետ բարեկամական կապով կապուելու լուսով միմեանց խօսք են տալիս, որ, այլասեռ երեխաներ ունենալիս՝ միմեանց տան. և երբ ունենում են՝ խաղում են օրօրոցների լծերը (միջնապիտ), իբր նշան, որ երեխաներն արդէն նշանադրուած են: Այնուհետև այս երկու գերդաստանները միմեանց Հետ խնամիական յարաբերութիւններ են ունենում, որոշ տօներին միմեանց ընծաներ ուղարկում, Հիւր գնում, իոկ երեխաները միմեանց Հետ խաղալով մեծանում են, մինչև 6—7 տարեկան Հասակը, երբ աշխատում են աղջկան աւելի Հեռու պահել տղից, որպէս նրա «Հարսնացուն», որովհետև գիւղական սովորութեամբ արգելում է յայտնի կերպով Հարսնացուն տեսնել, նրա Հետ խօսել, այդ Թող է տրւում միայն աղջկայ հօրից ծածուկ, գիշերը, մօր ներկայութեամբ:

Սրբորոցախաղի նշանադրութիւնը կատարուած է նաև այն դէպքում, երբ մինի որդիները սովորաբար չեն ապրում, յուսալով որ նշանածի բաղդը կարող է ապրեցնել երեխային՝ շուտով նշանում են նրան։

Աղջիկ փախցնել.—Այս վաղեմի սովորութիւնը տեղի է ունենում երբ գլխաւորապէս աղջկայ ծնողները համաձայն չեն լինում տալու իրենց աղջիկը նրա վրայ սիրահարուած երիտասարդին և երբ վերջինիս ծնողները չեն կամենում առնել նրա սիրած աղջիկը։ Առաջին դէպքում սիրահարուած երիտասարդը հաւաքելով իւր ընկերներին փախցնում է աղջկան։ Ընկերներից մինը մի լարմար տեղ գտնելով աղջկան, բռնում է նրա ճկոյթ մատը, կռիկները ծալում և հուփ տալիս, աղջիկը ցաւից ստիպուած վազում է երիտասարդի հետևից, մինչև որոշեալ տեղը, ուր թաք կացած ձիաւոր սիրահարը առնում է նրան ձիու վրայ և լափ ընկնում։ Երբ այս մասին լսում են աղջկայ ծնողները, ձիաւորուում, սար ու ձոր ընկնում, որոնում են և եթէ գտնում են՝ սաստիկ կռւում են, աղջիկը յետ առնում տանում տուն, իսկ եթէ ոչ, տղան միքանի օր աղջկան ծալաներում, կամ բարեկամի մօտ պահելուց և առւանգելուց յետոյ ուղարկում է հօրը տունը։ Ոստիկանութիւնը միջամտում է և հարցնում աղջկան, թէ ինքնակամ է փախել։ Աղջիկը ի նրկատ առնելով, որ այդպիսի նախատինքի ենթարկուելուց յետոյ այլևս չի կարող յուսալ մի լաւ ամուսին ունենալու՝ դրական պատասխան է տալիս։ Եթէ ուրիշի հետ նշանադրուած է լինում, փեսացուն և նրա կողմնակիցներն էլ միջամտում են, երկար ժամանակ կռւում և վերջ ի վերջոյ որոշում, որ երկու—նշանուած և փախցնող—փեսացուների կողմից իւրեքական մարդ քահանայի առաջնորդութեամբ ներկայանան աղջկան և առաջարկեն վերցնել այն փեսացուի թաշկինակը, որին սիրում է։ Հետո յաճախ փախցնողի թաշկինակն են ընտրում, որովհետև հակառակ դէպքում փախցնողը աքսորի է դատապարտւում, և այսպիսով խեղճ աղջիկը իւր սէրը գոհ է բերում մարդատիրութեան, ազատելով այն երիտասարդին, որ իւր համալկեանքը վտանգի էր ենթարկել։ Երկրորդ դէպքում, այսինքն

երբ տղայի ծնողները չեն համաձայնում առնել տղայի ուզած աղջկան, սա մի գեղեցիկ օր գնում, աղջկայ ձեռքը բռնում տանում է իրենց կամ մի մօտիկ ազգականի տուն: Ծնողները մի քիչ բարկանալուց յետոյ համաձայնում են և կամ, ծայրայեղ դեպքում, աղջիկը տալիս են տղայի ձեռք և տանից դուրս անում.—նա էլ սկսում է առանձին ապրել, նոր տուն տեղ լինել:

Աղջիկ ուզել.—Երբ տղայի ծնողներն որոշում են, թե ում աղջիկն են ուզելու, դեռ կողմնակի կերպով աշխատում են իմանալ թե արդեօք կրտսն. ապա մի օր տղայի հայրը, կամ հօրեղբայրը, կամ մօրեղբայրը, և կամ մի ուրիշ ազգական կամ մօտիկ անձնաւորութիւն գնում են աղջկայ տունը և գերդաստանի մեծից, օրինակ պապից, մեծ հօրեղբօրից և կամ հօրից խնդրում աղջկայ ձեռքը.

«Էկել եմ քո օջախից մի բուռը հող տանելու» ասում է սովորաբար խնամախօսը:

Աղջկայ տէրը որքան էլ տրամադիր լինի նրանց խնդիրը կատարելու, այնուամենայնիւ իսկույն և եթ խօսք չի տալիս:

«Լաւ կ'լինի, դու որ ուզում ես՝ մենք ինչ պիտի ասենք, ամա մի ժամանակ տու մեր տանեցոց հետ խօսի՛նք, մենք էլ պէտք է խորհուրդ անենք»:

Իսկ եթէ կամենում են մերժել, հէնց առաջին անգամին ասում են.

Ձեր կորուստը մեր տանը չի:

կամ՝

Դեռ մեր աղջկայ ժամանակը հասել չի, քե մատաղ, մե մատն երեխայ ա, նրան հնց նշանենք:

Եւ կամ՝

Գեռ շատ պակաս ու պուտ ունի մեր աղջիկը:

Վերջապէս երբ վերջնական պատասխանը լսելու համար խնամախօսները կրկին անգամ գնում են աղջկայ տունը, տանում են իրենց հետ օղի, մի մատանի, մի բաղդատի կամ փուշի, և երբ աղջկայ տէրը տալիս է իւր համաձայնութիւնը՝ սրանք իսկոյն հանում են իրենց գրպաններից օղին և նոր

բարեկամութեան մասին բարեմախտութիւններ անելով խմում, ապա Հարոնացուն առաջ են բերում և տալիս սովորաբար մի բաղդադի կամ շալովի և երբեմն՝ նաև մատանի: Այս առաջին նշանը տեղական բարրառով կոչւում է բելգեաՀ:

Եթէ աղջիկը տարբեր գիւղից են ուղում, աղջկայ ծնողներն իրենց Համաձայնութիւնը տալուց առաջ կամ նոյն իսկ յետոյ մարդիկ են ուղարկում «*իինսի տունը տնսնելու*»: Սըրանք, որ սովորաբար աղջկայ մօտիկ ազգական տղամարդկանցից են լինում, նախապէս իմացնում են գնալու օրը և ապա գնում: Այստեղ ամենայն ուշադրութեամբ նայում են տանը, տեղին, Հաշւում անասունները, Հարցուփորձ անում նրանց կարողութեան մասին, լաւ Հիւրասիրում և վերադարձին կամ Հոտատում իրենց տուած խօսքը և կամ մերժում:

Նշանադրութիւն.— ԲելգեաՀը տալուց յետոյ երկու խնամիների Համաձայնութեամբ որոշում է նշանադրութեան օրը: Նոյն երեկոյին տղայի տէրը Հրաւիրում է իւր մօտիկ ազգականներին և ծանօթներին, և նրանց Հետ միասին գնում աղջկայ տունը՝ տանելով նշանը—Հարոնացուի Համար մի մետաքսեայ թաշկինակ և մի որևէ զարդ՝ մատանի, խաչ, ապարանջան, գինտեր և այլն: Բացի սրանից ջաՀիլ տղաների շալակը տուած ուղարկում են մի ամբողջ գառան կամ ոչխարի խաշլամայ, 6—12 բոխչայ թխուածք, ալսինքն գաթայ, նազուք, մի քանի ափսէ Հալուայ, կարմիր ձուեր, չոր միւրգ, 1—2 թունգի օդի, 5—10 թունգի գինի և Հարոնացուի տան աւագ անդամների Համար ոտնամաններ:

Հարոնացուի տէրը ուրախ դիմաւորում է խնամիներին, ներս Հրաւիրում և իւր օդիից մի մի բաժակ խմացնում: Ապա թէյ են մատուցանում և ընթրիք տալիս: Առատութեամբ բաշխում է օդին և գինին, որ խմում են «Աստուած շնորհաւոր անէ, բաղդաւոր ըլին, մի բարձի ծերանան» բարեմախտութիւններով: Ընթրիքից յետոյ մեծ սկուտեղների վրայ դրած մատուցանում են փեսացուի տանից բերուած ուտելիղէններն ու խմիչիքը. քաՀանան, որ «վերի գլխում» —ամենապատուաւոր տեղում—նստած է լինում, վերցնում է դրա մի մասը Հանդիսական-

ներին տալիս՝ ուտելու, իսկ մնացածը ուղարկում տնեցիներին, «Աստուած շնորհաւոր անէ, շէն ու Հաստատ մնայ խնամին» բարեմախտելով: Ամենքը կրկնում են քաջանալի խօսքերը: Յետոյ քաջանան հրամայում է առաջ բերել հարսնացուն: Մի հասակաւոր կնոջ թւել բռնած, զուգուած, զարդարուած, երեսը բաց լառայ է գալիս օրուայ հերոսուհին և կանգնում քաջանալի կողքին: Իսկոյն վերջինս հրամայում է փեսացուին, որ լուռ ու մուկ, աննկատելի կերպով օղանակցում է, գալ կանգնել հարսնացուի կողքին: Ապա քաջանան վերցնում է նշանը խնամու ձեռից, տալիս փեսացուին, առաջարկելով մատուցանել հարսնացուին, և դառնալով վերջինիս՝ նրան Հասկանալի լեզուով բացատրում է, որ այդ օրը նա միանում է այդ տղայի հետ և այսուհետև նրանք անբաժանելի են և միայն մահը կարող է նրանց բաժանել: Եւ եթէ այս միութեան նա յօժար է, թող վերցնէ նշանը: Հարսնացուն վերցնում է նշանը—մատանին կամ մի որևէ զարդ—իսկոյն բոլորը դառում են. «Աստուած շնորհաւոր անէ»:

Յետոյ քաջանան վերցնում է մետաքսեայ թաշկինակը և իւր ձեռքով ձգում հարսնացուի գլխին ու սկսում իւր օրհնանքն ու պաշպանիչը: Երկու ամոլները ձեռք ձեռքի տուած լուռ կանգնում են: Պաշպանիչից յետոյ փեսացուն գնում նստում է իւր տեղը, իսկ հարսնացուն մնում է կանգնած, առնելով ձեռքը մի ափսէ կամ մի փոքրիկ մատուցարան: Իսկոյն փեսացուի կողմից եկողները «վեր են գալիս երես տեսնուկը» — այսինքն դրամ են ձգում այդ ափսէի ժէջ (50 կ. մինչև 5 ռ.): Հարսնացուի կողմից հրաւիրուածները, քաջանան և տանուտէրը պարտաւոր չեն այդ նուէրն անելու: Վերջապէս քաջանան վերցնում է ափսէն հարսնացուի ձեռքից, համարում դրամը և տալիս հարսնացուի հօրը, որ մի բնծայ, սովորաբար արծաթեայ զօտի, առնի աղջկայ Համար: Սրանից յետոյ արդէն ցրում են:

Միքանի գիւղերում, ինչպէս օր. Վարդաբլուրում, Համեմատաբար աւելի նաՀապետական տնելում հարսնացուն առաջ է գալիս և տաք ջրով լուանում փեսացուի կողմից եկողներին ոտները և իւրաքանչիւրին մի զոյգ զուլպայ բնծայ տալիս:

Սրանք էլ փոխադարձաբար մի բուբլի քսանական կոպէկ են նուիրում նրան: Սակայն այս նուէրի քսանական կոպէկներն են մնում Հարսնացուին իրր զուպաների զին, իսկ մնացածը տրւում է նրա Հօրը, որպէսզի օժիտին վերաբերեալ մի որևէ բան, չաճախ դօտի, գնէ:

Առաջներում նշանադրութեան ժամանակ փեսացուն ներկայ էր լինում, այլ միայն յաջորդ օրը, երեկոյեան, աներոջից ծածուկ, ներս էր ընկնում խնամոնց տուն, ուր զօքանջը Հիւրասիրում էր և ցոյց տալիս Հարսնացուին: Այժմ սաստիկ արագութեամբ բարձրն ու սովորութիւնները փոխւում են և նստեալ, թէ ինչպէս մի օձնեցի նշանուած զոյգ մի մի ձի նստած ուխտ էին գնում Ս. Սարգիս, միմեանց Հետ խօսելով, ծիծաղելով: Եւ սրանց ծնողները Հեռուից Հետևում էին անտրտունջ, մինչդեռ առաջները թոյլ էր տրւում, որ մինչև անգամ փեսացուն օրը ցերեկով Հարսնացուի տան մօտով անցնի:

Այրիի նշանադրութիւնը.— Այրի կինը եթէ որդիներ չունի, սովորաբար վերադառնում է Հօրանց տուն և ամուսնանում, իսկ եթէ որդիներ ունի, մնում է սկեսրանց տանը և չի ամուսնանում, թէև կան և այնպիսիներ, որոնք ամուսնանում են, թողնելով իրենց երեխաներին սկեսրանց մօտ: Ընդհանրապէս այրի կանայք ամուսնանում են այրի մարդկանց Հետ, և սրանց նշանադրութեան ու պատկադրութեան Հոնդէսները շատ պարզ են լինում: Այրի տղամարդը մի պառաւի միջնորդութեամբ Հաճեցնում է այրի կնոջը իւր Հետ ամուսնանալու, ապա միքանի մարդ է ուղարկում նախ սրա սկեսրանց և ապա Հօրանց մօտ և նրանցից խնդրում այրի կնոջ ձեռքի ձառ անգամ սկեսրանք պահանջում են փեսացուից այնքան գլխազին, որքան իրենք վճարել են և այս դէպքում սեպհականացնելով այս զումարը, թոյլ են տալիս Հարսին տանելու իւր Հետ Հօրանց տանից բերածը, Հակառակ դէպքում խլում են նրանից նրա բոլոր ունեցածը և մի ձեռք Հանդերձով ճանապարհ ձգում:

Սովորաբար այրի տղամարդիկ կրկին ամուսնանում են, եթէ որդիք չունին՝ սերունդ ունենալու բուսով, իսկ եթէ ու-

նին՝ որքերին խնամող ունենալու հոգատարութեամբ: Չատ անգամ այլի տղամարդիք աշխատում են շատ շուտ, 2—3 շաբաթից լիտոյ ամուսնանալ, որովհետև աւելի երկար սպասողը աւելի դժուարութեամբ է հարս գտնում, քանի որ հազիւ է պատահում, որ բարոյական կեանք վարէին:

Այլինքը նշանադրուելիս փոխանակում են իրենց գօտիները կամ միմեանց մի-մի նուէր տալիս:

Պսակը շատ պարզ, առանց դաւուլ-գուռնի է կատարում եկեղեցում կամ տանը: Պսակուող կինը հազնում է պսակուող տղամարդի մեռած կնոջ հանդերձը, որով կենդանացած են համարում նախկին ամուսինը: Նմանապէս այլի կնոջ մեռած ամուսնու շորերից հագնում են թագուորին, որպէս զի վերականգնեն նշեցեալ ամուսնու լիշատակը. դժբաղդ ծնողները արցունք թափելով համբուրում են թագուորին և նրան որդի կոչում, սա էլ նրանց իբր հոգևոր հայր է ընդունում:

Տարէք—քերէք կամ փեսափայ և հարսնափայ: Սովորաբար $\frac{1}{2}$ —3 տարի նշանուած են մնում և այս ժամանակամիջոցում հետևեալ նշանաւոր տօներում խնամիկները միմեանց ընծաներ են ուղարկում, որ տեղական բարբառով տարէք—քերէք է կոչւում, որովհետև թէ տանում են և թէ նրա փոխարէնը ստանում—քերում են: Այսպէս՝

Բարեկենդանին.—Հարսնացուի տանից ուղարկւում է փեսացուին փեսափայ՝ գաթայ, նազուկ, եփած հաւ, հալուայ, դրամի և ծխախոտի քսակներ, տոլաղներ, գուլպաներ, և այլն: Սրա փոխարէն փեսացուի տանից ուղարկւում է հարսնացուին՝ հարսնփայ միջուներին՝ մի զոյգ կօշիկ, գլխի շոր, հայելի, գրչահատ, չոր մրգեր և այլն:

Ժաղկազարդին.—Փեսացուի տանից ուղարկւում է հարսնացուին մի ոսկեզօծ, նաշխած կլենպտար, ալսինքն մի մեծ, արհեստական ծաղիկներով զարդարուած մոմ, վերան մի մետաքսեալ թաշկինակ կապած: Բացի սրանից՝ տան աւագ անդամների համար ոտնամաններ կամ թաշկինակներ, գաթայ հալուայ, օղի և այլն:

Ծաղկազարդին բոլոր նշանուած աղջիկները իրենց մայրե-

րի առաջնորդութեամբ անպատճառ գնում են եկեղեցի, ուր միասին կանգնում են մի որոշ տեղ, մի մոմակալի առաջ Թա- մասացութեան միջոցին նշանուած աղջիկները վառում են ի- րենց ուղարկուած մոմը (կլեպտարը) և ձեռներին բռնում մինչև «Փառք ի բարձունս» ասելը, ինչպէս Վարդաբլուրում, կամ Հէնց ոկզրից ամրացնում իրենց առաջը դրուած մոմակալում, ինչպէս Օձնում, սրանով և նրանք Հրապարակով խոստովանում են թէ յանձն են առել ամուսնական կենակցութեան ծանր լուծը: Թա- մասացութիւնն աւարտելիս Հարսնացուների մայրերը վերցնում են մոմերի մնացորդները՝ որպէսզի արու թոռ ունենալիս՝ մկրր- տութեան ժամանակ վառեն: Այս Հարսնափալի դէմ փեսացուի կողմից մի քանի գիւղերում, ինչպէս Օձնում, ոչինչ չի ուղար- կւում, իսկ մի քանիսում, ինչպէս, Վարդաբլուրում՝ ուղարկ- ւում է զատկի երեկոյին մոմ, մի արխալուղ, կամ դռչուղ, գալպայ, զոյգ թուով կարմիր ձու, գաթայ և այլն:

Հատկին.— Փեսացուի տանից ուղարկւում է ներկած ձուեր, եփած Հաւեր, մի Հատ գառ, և մի շիշ օղի:

Համբարձմանը.— Փեսացուի կողմից ուղարկւում է մի գառն, վղին մի շալովի (զլխի փաթաթան) փաթաթած. 15—20 ոչխարի բուրդ (մօտ 1½ փութ), մի գլուխ պանիր (մօտ 10 ֆ.), մի զոյգ կիսակօշիկ Հարսնացուի Համար, թխուած ք- ներ՝ գաթայ, նազուկ, Հալուայ: Պաթեաները լինում են կենտ թուով, ¹⁾ որոնցից մինը խաչաձև է լինում և կոչւում է *Դալլ- գաթայ*: Երբ Հարսնացուն բոլոր Հրաւիրեալներից յետոյ, իւր ընկերուհիների Հետ առանձնացած ճաշում, վերջացնում է, աւագ ընկերուհին վերցնում է դանակը և փեսացուի կողմից նուէր է պահանջում խաչ գաթան կտրելու: Եւ երբ ստանում է 5—20 կ. կտրում է և բաժանում բոլորին: Այս դրամը տըր- ւում է Հարսնացուին:

Փեսացուն ևս անմասն չի մնում. թէև նրան չեն թույլ տալիս այդ, ինչպէս և միւս բոլոր փայերի օրերում, գալ Հարս- նացուի տուն և գուարճանալ, բայց և այնպէս՝ նրան բաժին

1) Պաթեաների թիւը կենտ է լինում, այսինքն՝ կենտ է լինում գաթան, որ ջուխտ (զոյգ) գնան Հարսն ու փեսան:

են ուղարկում զաթայ, հաւ, գինի, երբեմն էլ խաչ-զաթայ, որ ընկերների հետ քէֆ անի:

Նշանաւոր ուխտերի ժամանակ, երբ սովորաբար թէ Հարսնացուի և թէ փեսացուի գերդաստանները միեւնոյն ուխտատեղումն են գտնուում, փեսացուի զօքանչը, քնինները, (խանրաջիները) փեսացուի համար ուղարկում են եփած հաւ, կողակ, պանիր, զաթայ, մեղր ու կարագ միասին շախաղած, և ալլն, փեսացուն էլ իւր կողմից ուղարկում է չոր մրգեր, խաղող, տանձ, խնձոր և ալլն: Այստեղ թող է տրուում փեսացուին հիւր լինել զօքանչենց մօտ, միայն պահանջուում է, որ նրա ներկայութեան միջոցին Հարսնացուն թագ կացած լինի: Իսկ Հարսնացուին բոլորովին թող չի տրուում այցելել սկեսրանց ընտանիքին:

Վարդավառին.— Փեսացուի տանից ուղարկուում է Հարսնացուին թարմ մրգեղէններ, իսկ սկեսուրը օտրից (կալից) ուղարկում է զաթայ, ւակղայ, սեր և ալլն:

Խաչեղբայր կամ կնքաւոր.— Զատ գաւառների նման այստեղ ևս խաչեղբայրութիւնը տոհմային է, միացած կնքաւորութեան հետ: Միեւնոյն տան մի որոշ կամ մի որեւէ անդամը շարունակ կնքաւոր կամ խաչեղբայր է լինում մի ուրիշ տան մէջ ծնուող և ամուսնացող անդամներին: Երբեմն էլ երկու տուն միմեանց փոխադարձ կնքաւոր, խաչեղբայր են լինում, որպէս զի փոխադարձաբար ծախսելով, միմեանց չափաւորացնեն: Այսպիսի կնքաւորութիւնը կոչուում է Խաչմոռն:

Խաչեղբայրութիւնը սերունդից սերունդ է անցնում և փոխում է գլխաւորապէս այն դէպքում, երբ խաչեղբոր չոտը վրայ չի գալիս, այսինքն նրա կնքած երեխաները չեն ապրում:

Խաչեղբայրը շատ մեծ յարգանք է վայելում սանահօրանց տանը, ամէն մի ուրախութեան և տխրութեան սեղանին նա մասնակից է, պատուաւոր տեղն է նստում. սանամայրը ՚ի նշան խորին յարգանքի երբէք հետը չի խօսում և նրան տեսնելիս փախչում թագ է կենում. երբէք խաչեղբորանց տան դռնից չի անցնում, սրբապղծութիւն Համարելով այդ: Ամեն մի նշանաւոր տօն օր՝ ինչպէս բարեկենդանին, Համբարձմանը,

վարդավառին, տարեմտին կնքաւորին ընծաներ է ուղարկուած գաթայ, հալուայ, ներկած ձուեր, գուլպաներ, չոր մրգեղէններ և այլն: Բացի սրանցից, որ ամէն տարի կրկնուած է, հարսանիքներից մի քանի ամիս յետոյ ուղարկուած են խաչեղջորսեղան կամ զբաւորափայ, որ պարունակուած է իւր մէջ հետեւեալները. մի, ամբողջովին խորոված, գաւը կամ ոչխար, 5—10 թունգի գինի, 1—2 թունգի օղի, 4—6 բողջայ գաթայ՝ ամէն մի բողջի մէջ մի մի եփած հաւ և մի մի ափսէ հալուայ դրած, տան բոլոր անդամներին համար գուլպաներ, ծխախոտի և փողի քսակներ, թաշկինակներ և այլն: Խաչեղջորստանալով այս շտանքը, հրաւիրուած է իւր ազգականներին և ծանօթներին, քահանային և տանուտիրոջը և մի լաւ քէֆ անում: Եւ երբ հետեւալ օրը սանահօրանց ամանները յետ է դարձնում, նրանց մէջ դնում է մի գլխի շալ կամ մի հասարակ դէրիացու և կամ մի այլ ընծայ 1—3 ի. արժողութեամբ: Ընդհանրապէս խաչեղջորսը ծախուած է կննքի միջոցին 1—4 բուրլի, իսկ պսակին¹⁾ 6—10 բ.:

Բարգնանկտրէք.— Հարսանիքից մի քանի շաբաթ առաջ փեսացուի հայրը քահանայի և մի քանի մօտիկ անձնաւորութիւնների հետ հետեւալ եօթ բողջա (կապոց) նուէրներն առած գնում է հարսնացուի տուն.

ա. Բոխչա. ոտնամաններ հարսնացուի հօր, մօր, հօրեղբայրների, տան հարսների և ուրիշ մօտիկ ազգականների համար:

բ. Բոխչա թէյ, ($\frac{1}{8}$ — $\frac{1}{4}$ Փ.), շաքար (4—8 Փ.), մրգեղէն, հարսնացուի համար հայելի, դանակ, սապոն, մի թուի աւետ, մի թուի զնգասեղ և մի թաշկինակ (յաճախ մետաքսէ):

գ. Բողջա. խորովու — եփած կամ խորոված մի ոչխար կամ այծ:

դ. Բոխչա. Եօթ հատ գաթայ և մի ափսէ հալուայ:

ե. Բոխչա. եօթը գաթայ և մի տապակած հաւ:

է. Եօթը գաթայ, որոնցից մինը կոչուած է խաչգաթայ:

¹⁾ Սափրիչին 20—30 կ. թաղթ կապող ազգանքերին 20—30 կ. ուսպանգ պարածողներին 40—60 կ. գլուխկապէք՝ 50 կ. 1 բ. քահանային հանդերձօրէնէք. 40—1 բ. կոխ բունողներին 20—40 կ. ընծայ հարս ու փեսին 1 բ.—3 բուրլի:

Երբ հասնում են հարսնացուի տունը, ուր հրաւիրուած են լինում նաև վերջինիս մօտիկ ազգականներից մի քանիսը, սովորական հարց ու բարևից և ընթրիքից լիտոյ քաջանայի առաջարկով սկսում են որոշել, թե ինչ բաժինք է տանելու հարսնացուն, հարսանիքի ժամանակ ինչ մասացու և քանի թունգի խմիչք՝ գինի և օղի պիտի բերէ փեսացուի հայրը և թե երբ պիտի կատարել հարսանիքը։ Սովորաբար սակարկում են ոչ թե պսակուողների հայրերը, այլ սրանց ազգականները, որոնք նախապատրաստուած են լինում։ Երկարատև լամա սակարկութիւնից լիտոյ, վերջ ի վերջոյ համաձայնում են, որ փեսացուի կողմից տրուի հարսնացուի կողմին մի խալաթ հարսնացուի մօրը 10—15 բ. արժողութեամբ, այս նուէրը կոչւում է «կաթնիգին», 10—15 բ. դրամ ծախսերի համար։ Այս դրամը մնացորդ է բաշլըղի կամ գլխագնի, այնպէս որ երբ փեսացուն այլի կամ հասակաւոր է լինում, աւելի շատ միչև 100 բ. են առնում և այն ժամանակ Հէնց իրենք էլ «բաշլըղ» են անուանում, 1—2 ոչխար կամ եղ, 1—2 թունգի օղի և 10—20 թունգի գինի, և նորապսակների ներքնակի երեսն ու աստաւը, որի մէջ հարսնացուենք տէտք է բուրդ ածեն և կարեն։

Իսկ հարսնացուի կողմից որոշում են տալ իրր օժիտ հանդերձեղէններ, որ մենք կըլիշենք լիտոյ։

Երբ այս բոլորը որոշում, վերջացնում են, մի մի բաժակ էլ օղի են խմում, բարեմախտութիւններ անելով և ապա խընդրում հարսին առաջ բերել, որ «տեսնեն»։ Հարսնացուն զալիս համբուրում է բոլորի ձեռքերը և փեսացուի կողմից եկողները հարսնացուին 20—40 —ական կոպէկ նուէր են տալիս, որ կոչւում է «երեստեսնուկ»։ Այս նուէրների փոխարէն հարսնացուն պարտաւորւում է հարսանիքից լիտոյ մի մի զոյգ գուլպա կամ պաճիճ նուէր ուղարկել այդ նուիրատուներին։

Աւելի օտորին խաւերում հարսնացուն լուանում է հիւրերի ոտքերը։

Շորածնէք.—Հարսանիքն սկսելուց մի քանի օր առաջ կատարւում է «շորածնէքը» — փեսացուի տանը հրաւիրում են

փեսացուի մօր կողմի ազգականներն ու դրացի՝ կանայք, 10—20 հոգի: Մի համեստ ճաշով սրանց հիւրասիրելուց յետոյ՝ փեսացուի մայրը բերում է մի բոխչի մէջ կապուած կտորեղէններ և դնում այդ կանանց առաջ: Իսկոյն բոլորեքնանք խընդրում են բանալ մի կնոջ, որ բարի և նախանձելի անուան տէր է, շատ որդիներ ունի և «մարդը գլխին կենդանի է» և որ կարելու և ձեւելու շնորհք ունի, և շատ աղջիկների հետ թերևս և այս հարսնացուին սովորեցրել է կար ու ձև: Այս կինը բաց է անում բոխչան և մէկ մէկ ցոյց տալով կտորեղէնները՝ դասակարգում է՝ այս փեսացուի շապկացուն, փոխանացուն, շալուարացուն, արխալուղացուն, այս էլ՝ հարսնացուի շապկացուն (ծնկնաշորը (փոխանը) հերանքն են կարում): արխալուղացուն, իւրկացուն, դերիացուն, կուրտիկա, գօտին (շորից) կամ քամարը (արծաթից): և այլն: Ապա գնողներին արևշատութիւն մախթելուց և գովիլուց յետոյ, օրհնում է պսակուողներին և մկրտող դնում է մի կտորի վրայ, որ ձևէ, բայց առանց կտրելու՝ ասում է. «Մկրտող չի կտրում»: Իսկոյն բոլոր հանդիսականները կրկնում են. «Մկրտող չի կտրում»: Փեսացուի մայրը 50 կոպէկից մի բուրլի է դնում մկրտողի վրայ. հրաւիրեալներն էլ հետևում են նրան՝ 5—10 կ. նուէր տալով: Այս բոլորը պատկանում է այդ վարպետ կնոջը, որպէս և գլուխկապէքը և մագալի փողը, որոնց մասին յետոյ կը խօսենք, որովհետև սովորաբար հարսնացուները այդպիսի կանանց մօտ յաճախ դնում են և կար ու ձև սովորում:

Բոլոր շորերը ձեւելուց յետոյ, իւրաքանչիւր կին վերցնում է մի բան իրանց տանը կարելու, ի հարկէ առանց մի որևէ վարձատրութեան:

Տաշտադրէք. — Հարսանիքն սկսելու նախընթաց օրը փեսացուի տունը հրաւիրում են ազգական և բարեկամ կանայք «տաշտադրէք»-ի: Նախաճաշում են, որի ընթացքում օղի խմելով հետևեալ բարեմախտութիւններն են անում.

Պարոն ջան¹⁾, (խօսքը ուղղում են փեսացուի մօրը),

¹⁾ Սովորաբար՝ պարոն անուանում են հարսները իրենց տալերին, և կանայք իրենց հասակակից, մեծատուն կանանց:

աչքդ լուս, Ստուած ջուխտ ծաղիկդ օջախիդ բաղշի. Ստուած նրանց չար աչքից, չար նիաթից ազատ պաշի, ոնց որ էս որդուդ կանանց ու կարմիրը կապելուն արժանացար, միւս որդոցդ էլ Ստուած արժանացնի. քու օջախի հացն ու բարին շատ ըլի. քու հացը հալը Արաւհամու հացը դառնայ, որ ոնց հատնի, ոնց պակասի. քու տէրը քու գլխիցը անպակաս ըլի. բարով ու խէրով մին տարէն վրայ տղայ թոռան թուշը պաշեօ: Ստուած էլ մեր նորահարսի ոտը բարելի անի հանդի ու հանդաստանի համար. մեր շէյիկ ու արար աշխարքի համար. բոլորիս էլ աչքը լուս ըլի:

Ճաշից լիտոյ ընտրում են իրենց միջից մինին՝ կերակրենք, հաց եփելու, որին կոչում են քէյվանի և սրան չորս կամ հինգ օգնական:

Անմիջապէս ընտրուած քէյվանին բերում է տաշտը, զընում է կանանց առաջ և պարկով ալիւրը՝ նրա կողքին և հրաւիրում մի բեղմնատուր և որդու, ամուսնու կսկիծ չտեսած կնոջ՝ առաջինը ալիւրը մաղելու, որպէսզի հարսնացուն էլ նրա պէս բեղմնատուր լինի և կսկիծ չտեսնի: Սա վերցնում է մաղը, մի քիչ ալիւր մաղում և բարեմախտում. «Հանդին պտղաբերութիւն, աշխարհին առատութիւն, հիւանդին առողջութիւն, փեսային ու հարսին բաղդաւորութիւն և երկար կեանք»: «Ստուած շնորհաւոր անէ», ձայն են տալիս ամէն կողմից, բաղդաւոր ըլեն, արդար հոգու տէր ըլեն:

Ապա փոսամայրն սկսում է իւր շնորհակալութիւնը յայտնել հիւրերին՝ ասելով. «Իմ աղիզ քվորտենք, ինձ աղըզացրիք (ձեր ներկայութեամբ պատուեցիք ինձ), Ստուած ձեզ աղըզացնի. ոնց որ իմ որդու կանանց ու կարմիրը պտենք կապել, էնէնց էլ ձերոնցը կապենք խէրով ու բարով: Տէր Ստուած ինքը բոլորիդ վերջը բարի անի»: Յետոյ հրաւիրեալները 5—10 կոպէկ դնելով տաշտի ծայրին իբր նուէր քէյվանուն՝ ցրում են:

Հարսանիքի նստելը (սկսուիլը). — Հարսանիքները առաւելապէս տեղի են ունենում ձմեռը, հոկտեմբերից մինչև փետրուար, մանաւանդ բարեկենդանի օրերին: Սովորաբար սկսում

են ուրբաթ օրը և աւարտում՝ աղքատները՝ կիրակի, իսկ Հա-
րութաները երկուշաբթի կամ երեքշաբթի:

Տունը մաքրելուց և մի թաղթ կապելուց լիտու, երեկոյ-
եան դէմ փեսացուի տան կտուրին հնչել են տալիս գուռնան,
իսկոյն բոլոր կողմերից բոբիկ ու տկլոր երեխաները ձեռքերը
իրենց շնչով տաքացնելով վազում, շրջապատում են նուագածու-
ներին: Մի քանի րոպէից ահագին բազմութիւն գալիս հաւա-
քւում է փեսացուի դռանը. ահա մի եզ կամ կով դուրս են հանում
գոմից, ոտները կապում՝ վայր գլորում, մտադործը դանակը խալաձև
քսում է վզին և կանգնում սպասելով նուէրի, որ կտրի. գուռնային
ոտով արգիլում է նրան, որ մի նուէր էլ ինքը ստանայ: Փեսացուի
մայրը պար է գալիս և մի թաշկինակ նուէր տալիս գուռնայուն և
մի ուրիշը՝ մտացուն մորթողին: Ապա փեսացուի քայրն է պար գա-
լիս և մի ուսպանգ կապում թագուորի կրծքին. — սա մի կար-
միր թաշկինակ է, որի մի ծայրը ամրացնում են ձախ օձի-
քում, իսկ միւրը՝ գօտու աջ կողմում: Այս միջոցում մորթում
են եզը. իսկոյն ամուրիներից աւագագոյնը կամ թագուորա-
մայրը հէնց առաջին դուրս ցայտած արիւնում թաթախում է
մի կտոր կարմիր թիւ և խնամքով պահում իւր մօտ մինչև
նորապսակների առագաստ մտնելու օրը, որպէսզի թագուորը
«կապ»¹⁾ չընկնի (չկորցնէ առնական զօրութիւնը): Ազապների
զլխաւորը այդ հոգատարութիւնով չի բաւականանում, այլ և
իւր արիւնոտ մատը խալաձև քսում է թագուորի ճակատին,
որ նա զերծ մնայ փորձանքներից: Մի քանի գիւղերում էլ
քէլվանին մի կողպէք է թաթախում այդ արեան մէջ, կող-
պում և այդպէս պահում մինչև առագաստի զիշերը, երբ բաց
է անում, որպէսզի թագուորը «կապ» չընկնի:

Մինչդեռ եզը մորթողը քերթում, կիսում, միտը տեսակների
է բաժանում, գիւղի տղաներն ու աղջիկները պարում են: Ապա
եզի կէսը, բարկակտրէքի ժամանակ խոտտացած խմելիքի և
այլ իրերի հետ երկու մարդու ձեռքով ուղարկում են հարսնա-

¹⁾ Եթէ «կապ ընկնի» և կեղեցու աւելը տանում դնում են նո-
րապսակների անկողնու տակ: որ «կապը բացուի»:

ցուի տունը: Պէտք է ասել, որ շատ անգամ խոստացածից քիչ և վատն են ուղարկում, ուստի և խնամոնք դժգոհ են լինում:

Սրանից յետոյ սկսում է «Երթը» դէպի քաւորենց տունը: Թագուորացուն, ազապների—իւր մականների Հետ—դաւուլ գումանի և ջաշերի (մաշխալա) առաջնորդութեամբ, «ուսա» կանչելով գնում են քաւորենց տունը: Խաչեղբայրը տանը պատրաստուել, սպասում է, որովհետեւ նախընթաց օրը փեսացուի տանից երկու հոգի մի շիշ օղի և մի գաւ գինի առած ներկայացել են նրան և սանաւօր կողմից խնդրել այդ մասին: Նոյնպիսի հրաւէր ստացել են նաև վերջինիս ընտանիքը, երկու պատուաւոր կանանց միջոցով: Երբ «երթը» հասնում է քաւորենց դռանը, կանգ է առնում և ազապները ըսկտում են պարել, մինչև որ խաչեղբայրը դուրս է գալիս տանից և ներս հրաւիրում բոլորին, նուագածուների Հետ միասին: Երբ ներս են մտնում, խաչեղբայրը համբուրում է Թագուորացուի այտը, իսկ սա նրա ձեռքը, թէկուզ նա հաստկով իրենից փոքր լինի: Անմիջապէս օղի է մատուցում և բոլորը նստում հաց են ուտում: Եւ երբ աւարտում են հացկերութիւնը՝ նուագածուները նորից են սկսում ածել. առաջ է գալիս խաչեղբօր կինը կամ չափահաս քույրը և կամ աղջիկը խաչեղբայրական ուսպանգը ձեռին բռնած, և սկսում է պարել. նախ փեսացուն և ապա ազապները սկսում են «շարաշ» (պարելու համար զրամական նուէր) տալ պարեկին, իւրաքանչիւրը 10—20 կոպէկ: Աւարտելով պարը՝ պարեկը տալիս է իւր ըստացած փողերը նուագածուներին և մօտենալով Թագուորացուին, ուսպանգը (կարմիր թաշկինակը) մի քանի անգամ խաչաձև մեկնում է նրա կրծքին, ապա ձգում աջ ուսին և արագութեամբ հեռանում: Ազապներից մինը կապում է այս ուսպանգը միւս ուսպանգների վրայ «Աստուած շնորհաւոր անէ» ասելով: Այնուհետեւ պարում են ուրիշները և ապա խաչեղբայրը Թագուորի և մականների առաջ կապում է իւր մէջքին մի թուր և բոլորի Հետ վերադառնում փեսացուի տունը նոյն կերպ ածելով, պարելով, գոռում-կոչիւնով:

Մինչև սրանց գալը գլխատանը, կամ մաքրած երկայն

գոմում սփռոցներով ծածկած յատակի վրայ, միմեանց հանդէպ, աւագութեան կարգով շար ի շար նստած են լինուով 50—80 հարանեւոր տղամարդիկ, իրենց գլուխ ունենալով քահանային և տանուտէրին: Խաչեղբորը բերող խումբը տեղաւորում է թաղալի վրայ, որ յատկապէս շինուած է թագաւորի, խաչեղբոր և ազապների համար: Թաղալը ժամանակտօրապէս կապւում է զլիստան կամ գոմի մի անկիւնում, վերան նախ թաղիք և ապա զորդ ու մի սփռոց փռած: Այս սփռոցը պիտի սփռուած մնայ մինչև հարսանիքի աւարտը: Պատերին էլ կապերտներ (ձունձ) են մեխում: Երբ խաչեղբայրը և թագաւորը ներս են մտնում, թաղալ շինող երիտասարդները պառկում են թաղալի վրայ, մինչև որ խաչեղբայրը միքանի կողէկ է նուիրում, անմիջապէս վեր են թռչում և նախ խաչեղբորը և ապա թագաւորին բարձրացնում, նստեցնում թաղալին:

Մի քիչ յետոյ սաղիները (սպասաւոր) սփռում են սրփռոցներ, հաց, բոլի, կարտոֆիլ, լոբու կիրկաշ առանց ափսէների ցրում սփռոցի վրայ. քահանան օրհնում է սեղանը և մի վայրկեանում ձայն ձուն կտրւում, ատամներն են սկսում գործել: Մի-մի բաժակ օղիից յետոյ մատուցւում են ծէէնով լորին (լորիջուր), յետոյ ձիթով փլաւը: Տան մեծը սեղան չի նստում, նա շարունակ ման է գալիս, կարգադրութիւններ աւնում գոռալով. «Ա՛ տղէրք, ստաքանները (բաժակ) լիքն ածեցէք, մի՛ լաւ ուտացրէք, խմացրէք իմ էլլիզին. փստք Աստծու, ամեն բան բոլ ա (առատ է), Աստծու տունը շէն, տղէրք ջան, խնաւիլ մէք, կերէք, խմեցէք, քէֆ արէք. տունը ձերն ա, ինչ պակասութիւն որ կայ՝ ճակատիս աւացէք և ալլին: Սովորաբար ընտրում են սեղանապետ (թամադայ) և զինու առաջի բաժակը նրա կենացը խմում, բարեմախտելով լաւ կառավարել իրենց. ապա նա էլ ընտրում է իրեն օգնական կամ օգնականներ և առաջարկում հետևեալ սովորական կենացները. 1) Զուխտ բարեկամի կենացը, 2) Հարսնացուի և փեսացուի կենացը, 3) Խաչեղբոր կենացը, 4) Թագաւորի զինուորների — ազապների — կենացը, 5) Նստած բարեկամների կենացը. 6) Հեռաւոր, ալդ ուրախութեանը չմասնակցող բարե-

կամների կենացը. 7) Ամբողջ Հասարակութեան կենացը. 8) Մարտիրոսի և բոլոր Հոգևորականութեան կենացը. 9) Գիւղի կառավարիչների կենացը. 10) Երկու սեռի պատաստորների կենացը. 11) Օջախի (գերգաստանի) փեսաների և աղջիկների կենացը և 12) Նշնցեցեալների Համար ողորմութեամբ: Առաջկերպութի ամբողջ ընթացքում (2—3 ժամ) փողհարները փոքր ընդմիջումներով ածում են մեղմ եղանակներ և լաւ ձայն ունեցողները առաւելապէս թուրքերէն երգեր երգում: Փետացուի քայրերը և Հարսները փեսայի և քաւորի Համար մրգեր—մազա են ուղարկում, և սրանք ընդունելով 10—20 կոպէկ են դնում ափսէի մէջ:

Վերջապէս աւարտում է ընթերիքը—քահանան կատարում է զոհացողական մաղթանքը, խնդրն փողհարները դուրս են գալիս և դռան մօտ սկսում ածել «Հալարը դուրս անելու» եղանակը և Հրաւիրեալները ցրւում են, մնում են միայն երիտասարդները և Հարս ու աղջիկները, որոնք աւելի ազատ ըզգալով իրենց, շարունակում են պարել, ուրախանալ և վերջը մի Հասակաւոր կնոջ Հետ Հարսի «Հալաւը», այսինքն Հարսի «Թաղի տակի» —Հարսանաց-Հանդերձը փոփոխակի դիւներին դնելով՝ պարելով և երգելով, զուռնի և ջահերի (մաշալա) առաջնորդութեամբ դնում են Հարսնացուի տունը: Մինչ այս՝ նոյն երեկոյին Հարսնացուի ընկերուհիները—Հասակակից աղջիկներն ու մի տարուայ պսակուած նորահարսները, մրգեղէններ են տալիս Հարսնացուին և զգւում. աւելի մտերիմները վառւում են օջախը, ուտով ջուր կրում, տաքացնում, Հարսնացուին լողացնում գոմի մի անկիւնում և յետոյ վրան ածում նախօրօք պատրաստուած մեխակաջուրը և ապա Հազցնում հօբանց պատրաստած նոր, Հարսանեկան շորերը, մազերը սանրում և զրիւխին ձգում նշանի բաղդադին և աւագութեան կարգով Հետը Համբուրւում, որովհետեւ միմեանցից բաժանուելու են:

Այս ժամանակ արդէն գալիս են Հարսնացուի Հանդերձ բերողները, Հանդերձը և Հինան, որ վերցրած է լինում մակարների Հետ եկող Հասակաւոր կիւնը, փոխ առ փոխ դնում են պար եկող երիտասարդների ու աղջիկների դիւներին և պար

ածում, ապա՝ Հանդերձը յանձնում են Հարսնացուի մօրը, իսկ Հինան մի աղջկայ, որ կրակի վրայ դնէ և հօկէ վերան, մինչև որ բերող կինը որպէս սկեսրոջ կողմից եկած լիազօր անձն, կրներկէ նախ Հարսնացուի և ապա նրա ընկերուհիների ձեռքերը: Յետոյ արդէն նոյն կերպ վերադառնում են փեսացուի տունը, ուր շարունակում են պարել և ուրսխանալ մինչև լոյս:

Հարսանիքի նրկրորդ օրը.—Անցեալ երեկոյի բոլոր հրաւիրեալները, որոնք այսօր հարս ու թագու որին խալաթ (նուէր) են տալու, արտօնութիւն ունին առանց հրաւիրուելու. առաւօտեան գնալ Հարսնքատուն, մի մի բաժակ օղի խմել և վերադառնալ, սպասելով երեկոյեան մեծ ընթրիքին:

Այսօր մեծ իրարանցում է տիրում Հարսնքատանը. — օջախի վրայ անկանոն շարուած են Յ—ն երկրնկնանի կաթսաներ, լւրաքանչիւրի մէջ մի բան փլթփլթալով եփում է, քէյլանին և իւր օգնականները իրարանցման մէջ են, բայց գլուխները չեն կոըցրած. միքանիսը նախընթաց օրուայ դեռևս կեղտոտ վեր ածած ամաններն են լուանում, միւսները ձաւար կամ բրինձ ընտրում (մաքրում), միս ծեծում, փայտ կրում, կերակրները խառնում, աչքերը տրորում տանը տիրապետած ծխալին ծովից և արտասւում:

Միւս կողմում մառանապետը, որ տան փեսան կամ մօտ բարեկամն է լինում, դաւերն ու շշերն է ջրով ողողում և օղի, գինի ածում, մոռացմամբ առաջի օրը չհրաւիրած բարեկամներին ճաշով Հիւրասիրում, սրտերն առնում. անուշադիր չէ թողնում նաև սարիքը եկած բռի Հովիւներին և տաւարածներին, որոնք նոյնպէս օջախի բարեկամների որդիներն են, նրանց սիրտն էլ պէտք է շահել, ինչպէս և մակտրները անթիւ ընկերների բերանն էլ մի բան պիտի ձգել, որովհետև մակտրների կռնատակը մտած խճկւում են մառանը մի բան փախցնելու:

Նրբորդ կողմում փոքրիկ հոտաղները շրջան են կազմել, շվի են ածում և մէկ մէկ պալլ գալիս, սրանց Հանդէպ, գետնի թաղիքների վրայ սփռած է սփռոցը, որ Հարսնառ գնացողները նախաճաշիկ անեն և գնան իրենց «աւարը» բերեն:

Դուանը փչում է զուռնան, ժողովուել են փեսացուի բարեկամ կանայքն ու Հարսները, որպէսզի փեսացուն Հարսնառ զնալիս իւրաքանչիւրն իւր դեռաՀասի ձեռքով պար ածէ ու կապէ Թագուորի կրծքին իւր ուսպանգը: Աւելացրէք այս շոյորի վրայ մանուկների լացն ու դռոցը, որ իրենց զրազուած մայրերից ծիծ են պահանջում, երեխաների վիտտոցն ու աղմուկը, մեծերի միմեանց Հրելով ներս ու դուրս անելը և դուք կստանաք Հարսընքատան պատկերը:

Սափրելու ծէսը.—Նախաճաշիկից յետոյ Թագուորը, խաչեղբայր և մականները նստոտում են թախտի վրայ ոտնակախ և սափրիչը սափրում է խաչեղբոր և ազա Թագուորի երեսը: Արջիկնիս միբուքը սափրելիս Թողնում է կիսատ և չի շարունակում, մինչև որ խաչեղբորից մի նուէր չի ստանում: Թագուորից Թափուած մազերը խնամքով Հաւաքում են և ախտիսի տեղ ածում, որ մարդու ոտք չը կոխէ, ապա թէ ոչ Թագուորը կը «կոխուի» (կը կորցնէ առնական զօրութիւնը): Սրանից յետոյ մականներն են սափրում և 5—10 կ. նուէր տալիս սափրիչին:

Ուսպանգ պար ածելը.—Սափրելու ծէսից յետոյ Հարս ու կին շրջան են կազմում, Թագուորին կանգնեցնում մի կողմը, մէկ-մէկ պար դալով ձեռքերին. խաղացնում են մի-մի ուսպանգ Հասարակ կամ քիշմիր Թաշկինսկ և կտպում Թագուորի կրծքին: Այս ուսպանգների թիւը Հասնում է 15—25-ի և Հարսանիքից յետոյ բաժանում Թագուորի ազգական կանանց:

Հարսնառ զնալ.—Ուսպանգներով ծանրաբեռնուած Թագուորի, քաւորի, իւր Հօր և 15—20 Հարսնևորների Հետ դաւուլ զուռնի առաջնորդութեամբ զնում են Հարսնացուի տունը՝ «Հարսնառ»—Հարսը բերելու: Հասնելով տան դռանը՝ շրջան են կազմում, զուռնան ածում է և մինը պարում: Դուրս է գալիս տան աւագագոյն անդամը, այլ կամ կին, Համուրում խաչեղբորն ու Թագուորին և ներս Հրաւիրում: Իսկոյն լռում է զուռնան, բոլորը ներս են մտնում և տեղաւորում. սակայն շուտով դարձեալ Հնչում է զուռնան և Թագուորի Հեռու բարեկամուհիները բերում իրենց ուսպանգներն են պար ածում և

կապում թագուորի կրծքին. սա էլ պարողներին շաքաշ է տալիս: Ապա բերում են Հարսնամօր ընծան թագուորին և խաչեղբորը — մի սկուտեղի վրայ դրուած գուլպաներ, պաճիճներ, պաճճակապ, քսակներ, թաշկինակներ, վերցնելով ընծաները, 30—50 կոպէկ դրամ են դնում մատուցարանի մէջ 'ի տրիտուր և ընծաները յանձնում ազապներին՝ պահելու: Բայց զուանաչին առաջ է դալիս և պահանջում է, որ թոյլ տան Հանել նրանց Հազի գուլպաներն ու նոր ստացածները Հազցնել, որովհետև այդ Հները արդէն սովորութեան իրաւունքով նուազածուներին պիտի պատկանին: Թագուորն ու քաւորը կամ Հանում տալիս են և կամ միքանի կոպէկ նուիրում:

Հանդերձ օրհնէք.—Պալիս է քահանան. Հարսնացուի Հարսանեկան շորերը մի սկուտեղի մէջ դրած առաջ են բերում և դնում թագուորի և խաչեղբոր առաջ. քահանան օրհնում է և ստանում խաչեղբորից 60 կ.—1 ռ. և միւս Հանդիսականներից միքանի կոպէկ: Ապա խաչեղբայրը վերցնում է Հարսնացուի գօտին, իսկ Հանդերձը տանում են սենեակի այն մասը, որ կապերտներով առանձնացրել են: Այստեղ նոյն, Հանդերձներ ձեռք կինը Հազցնում է Հարսին, գլուխը կապում և ապա խաչեղբորը կանչում գօտին կապելու: Պալիս է սա, մի նուէր — գլուխկապէք, տալիս այդ կնոջը և կապում գօտին ասելով. «Առջինեկդ տղայ ըլիս: Ապա երկու կին թռնում են Հարսնացուի թեւերից և բերում թագուորի կողքին կանգնցնում: Մօտենում է աղջկայ Հայրն և ձեռք ձեռքի տալով պսակաւողներին, օրհնում ասելով. «Ծլիք, ծաղկիք, մի բարձի ծերանաք, որդկերանց ու թոռների տէր ըլիք: Դուշմանի սրբտով չլիք, չար նիւթից Աստուած Հեռու պահէ ձեզ: Ապա քահանան է օրհնում և բոլորը ուղևորւում են դէպի եկեղեցի:

Պսակ.—Այս Հանդիսաւոր գնացքին, որին մասնակցում են ոչ միայն բոլոր Հարսնեւորները, այլ և զրեթէ բոլոր գիւղացիները իր Հանդիսական, առաջնորդում է դաւուլ-զուռնան. ապա գնում են մականները, պարեկողներ, գօտեմարտիկներ, յետոյ թագուորն ու թագուհին կողք կողքի, մի թաշկինակի մի ծայրից մինը, միւսից միւսը բռնած. թագուորը ձախ, իսկ

Հարաւ աջ կողմից: Թագուհու աջ կողմից գնում է մի Հասա-
կաւոր կին՝ Հարսնաքուր, նրա կուռք բռնած, իսկ սրա կող-
քին մի տղամարդ՝ Հարսնաղպէր. փեսայի կողքից գնում է
խաչեղբայրը՝ Թուրք կողքին կապած ¹⁾, իսկ սրա կողքից փե-
սաղպէրը՝ զինու շիշը ձեռին ²⁾, սրանց շուրջը կանանց և տը-
ղամարդկանց ահագին բազմութիւն: Քնացքը լաճախ կանգ է
առնում, որովհետեւ այլ փողոցի վրայ եղող բարեկամ տներից
խօսելու են դուրս լինում — մի առաջամատուցի մէջ ձուռնեղ,
Հաց և մօտը՝ ծխուող խունկ զրուած մատուցանում են Թագ-
ուորին: Սա էլ պաշտօնաւորուած է կանգ առնել, մի կտոր ձու-
ռնեղ վերցնել և մնացածը տալ մակարոներին. մի ուրիշը դա-
ւով զինի է դուրս բերում և խնկրում է մի մի բաժակ անուշ
անել. զանազան կտրիճներ ուզում են գօտեմարտել, Թագուորը
պիտի ապասէ, մինչև որ մինը միւսին վայր գլորէ և խաչեղ-
բայրը բաժանէ նրանց, երկուսին էլ Համբուրելով և մի քանի
կողէկ նուիրելով. ուրիշ անուանի մի ըմբիշ գալիս է և ճա-
նապարհի մէջ տեղը խաչեղբոր առաջ չոքում, որով կամենում
է ասել, թէ կամ իրեն հետ գօտեմարտելու խիղախութիւնն
ունեցող ըմբիշ դուրս բերէք, կամ նուէր տուէք: խաչեղբայրը
նրան էլ գոհացնում է, վեր բարձրացնում, հետը Համբուրում.
նոյնը անում է և Թագուորը:

Երբ եկեղեցի են Հասնում, այստեղ Ժամհարն է դուռը
փակում և չի թող տալիս ներս մտնելու, մինչև որ խաչեղ-
բորից նուէր չի ստանում:

Եկեղեցում պսակի խորհուրդը կատարելիս ³⁾ խաչեղբայրը
խաչաձև բռնում է Աւետարանը, խաչը և Թուրք պսակուող-
ների գլխին: Երբ աւարտում է խորհուրդը՝ քահանան Աւե-

¹⁾ Մի քանի զիւղերում, ինչպէս Հաղբատ, նախ գնում է խա-
չեղբայրը, յետոյ Թագուորը և ապա Հայսը՝ Հարսնեղբոր և Հասնե-
քորջ մէջ:

²⁾ Եկեղեցում նորապսակներին մատուցանելու:

³⁾ Պսակ զիւղում մինչդեռ եկեղեցում պսակի խորհուրդն են
կատարում, դրսում, փոքր ինչ հեռու, դաւուլ — գուռնի առաջնորդու-
թեամբ, մակարոները միմեանց հետ գօտեմարտում են:

տարանի մի ծայրը տալիս է թագուորի, միւսը թագուհու ձեռքը և հրաւիրում «ազատել նորապսակներին գերութիւնից»։ Նախ խաչեղբայրը և ապա հարսնեորները խաչհամբոյր են դրնում Աւետարանի վրայ։

Ապա բոլորը նոյն կարգով, բայց ուրիշ ճանապարհով վերադառնում են նորահարսի տունը ¹⁾։ Ճանապարհին միեւնոյն խոնջաները, զօտեմարտը, պարը շարունակուում է, բացի սրանից մականները հրացաններ են արձակում, սուր են խաղացնում, *փոփոքիս* կոչուած ծառը նուէր բերում, որ խաչեղբայրն առնելով յանձնում է մի լաւ պար եկողի, որ ձեռին բռնած շարունակ պարելով առաջ է գնում։ Փոփոխը մի ճիւղոտ է, վրսն զանազան կողմերից մանր ճիւղեր և շիւեր տնկած, որ ծառի նմանուի. ճիւղատի ծայրին ցցում են մի խնձոր, կամ սերկէիլ, կամ տանձ և կամ՝ դրանց չճարուած միջոցին՝ կարմիր ներկած ձու։ Դիւղերի վրայ և նրանց միջով անց են կացնում թիւի վրայ շարուած չամչի, սիմիտրի, ընկուզի և այլ մրգերի շարուկներ և կպցնում փոքրիկ մոմեր։ Ճանապարհին խաչեղբոր տանից մատուցուած «սեղանը» ևս ընդունելով, գրնացքը կանգ է առնում հարսի տան առաջը. իսկոյն դուրս են գալիս այս գերդաստանի բարեկամ հասակաւոր կանայք և աւագութեան կարգով, հերթով մօտենում են և համբուրում նախ թագուորին, յետոյ հարսին և ապա խաչեղբորը, իւրաքանչիւրի ձեռքի մէջ գնելով մի կտոր քաղցր բան—շաքար, կանֆետ, խնձոր և այլն, որպէս զի «հարս ու թագուոր քաղցր ապրեն միմեանց հետ»։ Հարսը սմին անգամ խոնարհում է և համբուրում նրանց կուրծքը։ Եւր այս կանանց ահագին շարքը վերջանում է, հարսնաղպէրը սկսում է յամառութեամբ պահանջել, որ թագուորի քոյրը գայ իւր հետ հրապարակաւ պիտոջտի անի։ Այս պահանջը շատ քիչ բացառութեամբ կատարւում է և ընդհանուր ծիծաղ, ուրախութիւն պատճառւում։

¹⁾ Եկեղեցուց դուրս գալիս նորապսակներից իւրաքանչիւրն աշխատում է ինքը առաջինը կոխել միւսի ոտը, որպէսզի նա իրեն ենթարկուի.

ի վերջոյ դուրս է գալիս տան նահապետը, համբուրում է հարս ու փեսայի ճակատները, խաչեղբորը ձեռք տալիս և հետը համբուրում և ապա մի նուէր տալով զուգնացուն՝ հրամայում է լուել և բոլոր հարսնեւորներին ներս հրաւիրում: Իսկոյն խաչեղբայրը մերկացնում է իւր թուրը և առաջ ընկած, առաստաղին սրի հարուածներ տալով հարս ու թագուորի հետ ներս է մտնում: Քաւհանան այստեղ էլ կատարում է պսակի խորհրդի պատշաճաւոր մասը՝ ապա՝ հարսին տանում են փարտի տակը, (կապերտներով առանձնացրած մասը), իսկ խաչեղբայրը թագուորի և մականների հետ բազմում են թախտի վրայ. *«Վոփր/իսն էլ վառում, դնում թագուորի առաջ: Քիչ լստոյ նստում են հաց ուտելու, նախապէս ձեռները լուանալով: Մատուցանում են բողբաջ և փլաւ: Ամենքը ուտում են բացի թագուորից, որ բիրանը խփած սպասում է «բերանբացէք»-ի: Հարսի հայրը կամ աւագ եղբայրը և կամ անրաժան հօրեղբայրը գալիս կանգնում է թախտի առաջ, մի պատառ ձուածեղ վերցնում թագուորի առաջից և ձայն տալիս.*

«Տէրտէր, օրհնեա տէր. էլլիկ ականջ՝ արէք, տուել եմ (այսինքն՝ տալիս եմ) իմ փեսին մի անծին էրինջ»:

— Էդ առանց քո տալն էլ իրանն է, ձայն են տալիս հակառակ կողմերից, հասկանալով, որ նա ակնարկում է հարսին: Թագուորը բերանը բաց չէ անում, չնայելով որ նա ձուածեղի պատառը հրամցնում է նրան: Հայրը ինքն է ուտում այդ պատառը և մի նոր պատառ վերցնելով՝ կրկին դիմում.

«Տէրտէր, օրհնեա տէր. էլլիկ, ականջ արէք. տուել եմ փեսին մի լաւ անցնգնիլ քեռհլան մագեան (էգ ձի)»:

— Հանաքի վախտը չէ, ձայն են տալիս այս ու այն կողմից, էգ իրանն է ու իրանը, բան ես տալիս՝ տուր:

Փեսան դարձեալ չի ընդունում պատառը. նուիրատուն ուտում է այս պատառն էլ ու նորից երրորդը վերցնում և այս անգամ իսկութեամբ խոստանում նուիրել կամ մի երկու փեթակ, կամ մի ձի, կամ կով և կամ մի ուրիշ բան: Այս անգամ արդէն թագուորը ընդունում է պատառը և բերանը բանում:

Հացկերուի ժամանակ մականները աշխատում են մի քանի հաց, զգալ զողանալ, որպէսզի հարսը իւր հօրանց տան դուլլաթը իւր հետ տանի, սակայն տանեցիք սատիկ հսկում են, որ թող չտան:

Հացկերուից յետոյ շտապում են շուտով օժիտը ցոյց տալ հանդիսականներին և դիմել փեսացուի տունը ¹⁾:

Բաժինը յիշեցնելը.—Հարսի օժիտը, որ տեղական բարբառով բաժինք է կոչւում, մաքրաշնորի մէջ կապած և մի արկղի (զանտուկի) մէջ դարսուած բերում են և դնում հանդիսականների առաջ: Գալիս է փողհարը, բաց անում, մէկ մէկ բարձրացնում, ցոյց տալիս բոլոր հարսնեւորներին և բղաւում:

«Տէր տէր, օրհնեա տէր. էլլիկ, ականջ արէք, շէն կենայ բարեկամը. տուել ա մեր թագաւորին մի լաւ խալիչա (զորգ), շէն կենայ, իրան ազապի կարմիրն էլ կապենք, ոնց որ մերինը կապեցինք»:

—Շէն կենայ, բղաւում են ամէն կողմից:

Ժողովրդական երգը այսպէս է լիշատակում այս բաժինքը.

Բամիմը յիշեցնելը (շորեղէնը)

Շէն կենայ խնամին,	Էրկու թաթուշաղ, ⁴⁾
Տուել ա իր բարեկամին,	Էրկու ջանչուրբաղ, ⁵⁾
Քուխտ համիան ջէջիմ,	Մի եզնախուրջին
Էրկու հատ շիջիմ: ¹⁾	Մի ուսախուրջին,
Մի հատ ուսաշոր,	Մի հատ խալիչայ,
Էրկու թաթաշոր,	Էրկու հատ քէչայ,
Մի հատ աչազլուխ, ²⁾	Տասը հատ քիսայ,
Հինգ ջուխտ էլ դաւուխ,	Հինգը խալիս ա,

¹⁾ Գիւղացիները պատմում են, թէ 20—30 տարի առաջ սովորութիւն էր, որ գիշերը հարսի հօրանց տանը պէտք է անցկացնէին, ի հարկէ աւելի մեծ ծախսեր պատճառելով և հետեւալ օրը, կիրակի, ճաշին էին գնում թագաւորի տունը, սակայն հանգուցեալ վարդան արքեպիսկոպոս Օձնեցին վերջացնել տուեց այդ սովորութիւնը. աւելորդ ծախսերի առաջն առնելու նպատակով:

²⁾ Մազից հիւսած հաստ թուկ: ³⁾ Թամբի վրայից մզուող գործուածք:

⁴⁾ Կաթսան բռնելու շոր: ⁵⁾ Պանիճը կապելու թել:

Քսան ջուխտ դուրբաց
Խնամոնց դուր զայ,
Մի հատ թանգաման,
Մի նաշխուն ըղտման,
Մի դուխիս բուն,
Եւ մի սանդղաբուն,
Էրկու հատ զջարի, ¹⁾
Խիստ սերուն կարի,
Մի հատ էլ զելի,

Ջօլ զօլ կուլենի,
Էրկու էլ կարպետ,
Դործողն ա վարպետ,
Էրկու հատ լաւ ձունձ, ²⁾
Նաշխերը փունջ փունջ,
Հինգ հատ նոխտակոտ, ³⁾
Վեց էլ ֆորթաթոկ,
Վեց հատ տրխատէն: ⁴⁾
Չէն կենան ու շէն:

Պղնձեղենի յեղեղեր.

Դարսելին բ ծալքը,
Տեսնենք պղնձկալքը,
Վերցնենք կուժը,
Ծանդրն ա ուժը,
Մի հատ բնկնանի,
Թող բարով տանի,
Մի պղինձ ու թաւաց,
Էրկուան էլ լաւ ա,
Մի նաշխուն սինի,
Թող խէրով լինի,

Մի հատ սաքսոնի, ⁵⁾
Խիստ լաւ բան կոնի,
Մի լաւ մաքմալի, ⁶⁾
Ղափաղուին թայի,
Տասը հատ լմբաքի, ⁷⁾
Փէտ չի որ ճաքի,
Մնացածը հեշտ ա,
Մի գուդում ու թեշտ ա: ⁸⁾
Մի շամփուր բարխանայ,
Մի հատ էլ մաշխալայ:

Արծաթեղենի յեղեղեր.

Պրծանք պղնձեղէնը,
Տանք էրծաթեղէնը.
Մի էրծաթէ թաս,
Խալիս էրծաթին բաս,
Մի սիրուն բաղիւյց
Լաւ բարաթի ա,
Մի հաղարփէշահ, ⁹⁾
Չատերին փէշբաշ,
Մի հատ բուլինբաղ, ¹⁰⁾
Ջողալին խաղ խաղ,
Մի հատ չալքեշեր,
Հուլունքնին մէջին,
Եռսուն հատ լուլէին,
Չատ սիրուն կուլէին,
Քսան հատ փիլաքի,

Սուրաթով հաքի,
Փելաքնին կարած,
Սազով չարմարած,
Մի ջուխտ բլազուկ, ¹¹⁾
Կաներին նաղուք,
Մի հատ մատանի,
Թող բարով տանի,
Ուզալթուն փարայ,
Յիթ ուն աշկարայ,
Մի հատ դօշանոց,
Մի լաւ օրօրոց,
Մի ջուխտ կունանոց,
Մնաց ճաթի ոսկին,
Վերջ տանք մեր խօսքին:

¹⁾ Թամբի վրայ ձգուող սուելի լաւ դործուածք: ²⁾ Վապերտ: ³⁾ Նոխտա: ⁴⁾ Տրեխի թեղ: ⁵⁾ Պղնձեղէն աման: ⁶⁾ Պղնձէ մեծ ափսէ: ⁷⁾ Պղնձէ փուրք ափսէ: ⁸⁾ Պղնձէ մեծ կոնք լուածքի համար: ⁹⁾ Գինի խմելու աման: ¹⁰⁾ Շէրփի մնով: ¹¹⁾ Մանեակ: ¹²⁾ Սպարապեան:

Ստորաբար օժիտը բաղկանում է Հետևեալ իրեղէններից. 1—2 ձեռք շոր, մափրաշ, ջէջիմ, թաղիք. խուրջին (բակեղաթ), տեղաշոր (անկողին), գուլպաներ, զանգուկ (արկղ), ձեռնադուլթի (փոքրիկ արկղ), սանր, հայելի, մկրատ. քիսաներ (քսակ). արծաթեայ թաս, թէյի զդայներ, արծաթէ քամար, պղնձէ կուժ, թեշտ, կովկիթ, սինիներ (սկուտղ), ջրի տոլչա (ջրաման), ամանեղէններ և այլն:

Օժիտից յետոյ լիշատակում են Հարսի բարեկամների տուած ընծաները, որ լինում են մասամբ պղնձէ ափսէներ, գլխի յարդարանքներ, թաշկինակներ և այլն, (Թագուորի բարեկամների կողմից տուած ընծաների մասին յետոյ):

Երբ կրկին կապում են օժիտը, որ տանեն՝ Հարսի կողմից մի երեխայ կամ երիտասարդ նստում է օժիտի վրայ և գլխարկը դնում մափրաշի վրայ: Թագուորի Հայրը 3—10 բ. է դնում գլխարկի մէջ յօգուտ Հարսի ծնողների և ապա օժիտը բարձել տալիս ձիու վրայ և ուղարկում իրենց տուն:

Այս ժամանակ գուռնէն դռանն սկսում է նուագել «Տարան Հայ» կամ «Էր Հեռանաս» եղանակը, Հարսը Հեկեկալով, լալով, երկու կանանց առաջնորդութեամբ գալիս կանգնում է օջախի մօտ, թագաւորը մօտենում է նրան և մօտը կանգնում: Ապա Հարսի Հայրը լալով խրատում և օրհնում է նրան այսպէս. «Ինաս բարև, բալա (որդի) ջան, Աստուած քեզ Հետ, Հալալ ըլի քեզ իմ օջախումը կերածդ ու խմածդ, Հագածդ ու մաշածդ, ոնց որ քու մօր ծծի կաթը. որտեղ էլ որ ըլես, չմոռանաս քո Հօր օջախը. Հնազանդ կաց քու գլխատիրոջը, Հնազանդ կաց քու նոր Հօրն ու մօրը, Հնազանդ կաց քու տեղերտոնցն ու քու նոր տան բոլոր մեծին ու փոքրին և այլն ապա դառնալով փեսին՝ քեզ էլ եմ օրհնում, բալաջան, իմ նոր ու ազիզ որդի, Տէր Աստուծը թուրդ կտրուկ անի, բաղդըդ երիզան անի. մին ցանես Հագար վերցնես. ո՛ր չոր տեղովն անցկենաս՝ կանանչի, ինչ բանի ձեռք մեկնես՝ ստանաս. կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերթ ըլի. էլ ինչ ասեմ, որթի, դվորը (ուր) գնաս՝ Աստուծ քու բունիւ գործին յաջողութիւն

տալ, դէ՛հ զնաք բարով, իմ բալենի, (որդիներ) Աստուած ինքը ձեզ Հետք...

Հայրը Հեռանում է, յառաջ է գալիս մայրը՝ և փաթաթուելով Հարսի վզով՝ ասում է. «Լաց մի ըլի, իմ ազիզ բալանջան, քանի որ մօրդ շունչը բերանումն ա՛ միտը ըզնգով բռնած կաշխատի որ ամէն հաւարիդ հասնու, ամէն ցաւիդ դարման անի, մի աղջիկն ա հօրն ու մօր տանը մնացել, որ դու մնաս. լալն էլ ատաթ է, զնալն էլ. զնա, որդի, Աստուած ինքը ըլի քեզ Հետ, ծլիս ու ծաղկիս, քու տիրոնջ Հետ մի բարձի ծերանաք. Աստուած ձեր չարը բարի անի. քանի որ շունչդ բերնիդ ա՛ աշխատիր որ իստակ անու՛ն ունենաս աշխարհքի միջին. մտահան չանես քու հօր օջախը, քրքրեն քձձեն՝ բարի անու՛նդ ոտի տակ չձգես. քու մօր հալալ կաթին քու չի մտիկ անես. ես քեզ եմ հալալ անում իմ կաթը և իմ ամազը, դու էլ ինձ հալալ աբա—ինչքան որ բարկացել եմ վրէժ ու գէշ խօսք ասել. զնաո բարով, բալանջան, զնացած ճամփէդ փունջ մանուշակ դառնալ, քու տիրոջ Հետ երկարիս: Ապա դառնալով թագուորին՝ ասում է. «Աստուած ձեզ Հետ, բալանջան, քու իմ օջախից վեր առած մի բուռը մոխիրը անհատնում ոսկի դառնալ քեզ համար, աչքիս լիսը հանում եմ ու քեզ տալիս, տեսնեմ թէ հնց պտիս բառլամիշ անիլ ու պահել. զնացէք, բալէք, Աստուած ձեր չարը բարի անի, որդով ու փառքով լիանաք աշխարումք...»

Այս ժամանակ աղջիկները երգելով Հարանացուի կողմից պատասխանում են.

Թողու մի, մէրայ, թողու մի տանեն,
Դեռ չեմ կշտացել իմ հօրանց տանէն,
Ինձի կրտանեն, դուլ, եսիր կանեն,
Թողու մի, մէրայ, թողու մի տանեն:
Միտդ բի, մէրայ, քու մէրութիւնը,
Մի թողայ քաշեմ էդ գերութիւնը,
Չատ դժար բան ա օտարութիւնը.
Խղճայ ինձ, մէրայ, մի թողայ տանեն,
Ինձի կրտանեն դուլ, եսիր կանեն:
Խառ ու դումաշով ինձի կոկում են,
Ազիզ մօրիցս առնում, ջոկում են,
Ո՛խ ես չեմ գնում, զօռով թոկում են,

Սիրտս, ջիգարս առնում պոկում են:
Օխտն ախպօր մի կենդ. քիրը տանում են.
Ազիզ ախպօրտանց հոգին հանում են.
Մօր ազիզ բային, ամս սպանում են:
Մի թողայ, մէրայ, մի թողայ տանեն.
Ինձի կրտանեն, դուլ, եսիր կանեն:

Արի, հէրայ, արի, հէրայ, Արի, ախպէր, արի, ախպէր,
Լայ իլ ազիզ բայիդ վրայ. Լացով սիրտս դու մի խախտեր,
Արի, մէրայ, արի, մէրայ, Արի, քիրայ, արի, քիրայ,
Քատ մի լայ ըլիլ դու իմ ծէրայ. Էս ջրիցն էլ կաթի քի վրայ: ¹⁾

— Մթնեց, հերիք է, դուքս եկէք, բղաւում են դրսից:
Թագուհին հեկեկալով հրաժեշտ է տալիս իւր ծնողներին, համ-
բուրում է օջախի քարն ու մեծ սինը ²⁾ և ապա դուքս գալիս ³⁾:
Մի մի բաժակ օղի էլ այստեղ խմելով ու բարեմախտու-
թիւններ անելով (սալլամաթին) գնում են դէպի Թագուորի
տունը, դառուլ զօւռնի առաջնորդութեամբ: «Ուռա» (կեց-
ցէ) կանչելով, պարելով, աւորճանակներ արձակելով հարս տա-
նողները հասնում են Թագաւորեց դուռը և այդտեղ կանգ-
նում: Գռան մօտ բացուած են լինում սեղաններ կերակրե-
նքով և խմիչքներով: Ժողովում են Թագաւորի բոլոր բարե-
կամները, որոնք նախընթաց երեկոյի հրաւերքին մասնակ-
ցում էին, փոքր ինչ բան ուտում և ապա պատրաստում Թագ-
ուորին «խալաթ» (ընծայ) տալու: Մի մարդ մի մատուցարան
ձեռին կանգնում է Թագաւորի կողքին, զօւռնային, կամ մի
ուրիշ բարձր ձայն ունեցող մարդ էլ սրա կողքին. ապա աւա-
գութեան կարգով սկսում են նուէրներ տալ: Նախ իրաչեղբայրն
է նուիրում 3 - 5 բուրլի, տալով այդ զօւռնայուն: Սա վերև
է բարձրացնում դրամը, ցոյց տալիս և դռում. «Է՛հն կենայ,
մեր իշչազպէրը, տուել ա մեր Թագաւորի ուղուրին ... մանէթօ:
Ձէն կենայ 2հն, ձայնում են հարսնւորները: Զօւռնային գնում

¹⁾ Այս երկու երգն էլ գրի է առել հանգ. Ե. Երզնկեանը:

²⁾ Այս սովորութիւնը այժմ միայն մի քանի յետ ընկած գիւ-
ղերում է մնացել:

³⁾ Մի քանի գիւղերում, ինչպէս Գսեղում, հարսնամայրը չպէտք
է նայէ հարսի յետևից, երբ նրան տանում են:

է դրամը մատուցարանի մէջ և նորը վերցնում, նոյն կերպ լիշատակում, աշխատելով մի ածական կացնել նուիրատուի անուան, գովելու և զուարճանալու նպատակով: Երբ թագուորի կողմի բոլոր հրաւիրեալները տալիս են նուէրներ՝ Համարում են և բարձր յայտարարելով յանձնում թագուորի հօրը: Այս զումարը Հասնում է 40—120 բ. — Համարեա որչափ ծախս էր եղած:

Սրանից յետոյ մի քանի զիւղերում, ինչպէս Հաղբատ, Թագաւորի մայրը Համարում է նորապսակներին և արծաթի թասով օշարակ (շարրաթ) խմացնում, որպէսզի նրանց կեանքը քաղցը լինի: Ապա բոլորին ներս են հրաւիրում և երբ հարսը ոտը դնում է տան սեմին, մատուցանում են նրան «լօշ» հացեր և նա առնելով տան չորս կողմի վրայ է շարտում, որպէսզի առատութիւն լինի: Երբ մտնում են ներս, հարսին տանում են «փարտա» յետևը, իսկ թագուորը իւր մականների հետ բարձրանում է իւր թագթի վրայ՝ նստում: Իսկ հարսը փարտի յետևը այնքան կանգնած է մնում և չի նստում, մինչև որ սկսուրբը մի ընծայ է տալիս և նստեցնում, բայց և այնպէս ամէն անգամ երբ մի կին է ներս մտնում, նա պարտաւորուած, ի նշան յարգանքի, ոտի է կանգնում և չի նրստում, մինչև որ այդ կինը չի խնդրում:

Հարսնեւորներն արդէն ցրուած են լինում, երեկոյեան մի քանի երիտասարդներ գնում են խալաթ (նուէր) տուողների դռները և թագուորի հօր կողմից հրաւիրում ընթրիքի: Բաւական վաղ մատուցում է ընթրիքը ահագին բազմութեան, որ ծալապատիկ, միմեանց հանդէպ նստում են գետնին: Սովորաբար մատուցանում են խաշլամայ, բոգրաշ, տոլմա, և սպա տաւարի կամ բրնձի փլաւ: Երբեմն կապույտ կոշուած ձուկն իլ երևան է դալիս: Վերոյիշեալ կերպով օրհնում է սեղանը, մառանապետ ընտրուում, կենացներ առաջարկում և զինու ահագին կթերը դատարկում: Երբ վերջապէս Հարսնեւորը նկատում է, որ զինին վերջանալու վրայ է, աչքով է անում խաչեղօրը և սա զինով լի մի բաժակի վրայ դնում է մի կտոր հաց և մի խնձոր և ուղարկում քահանային: Վերջինս Հասկանալով

դրա նշանակութիւնը՝ իսկոյն սկսում է զօհութեան մաղթանքը: Այս ժամանակ դռանը հնչում է «Հարկ դուրս անելու եղանակը», և Հարսնէոր տղամարդիկ ցրում են իրենց տնեւորը: Սրանից յետոյ Հացի են նստում կանայք, որոնց թիւը տղամարդկանցից պակաս չէ լինում: Սրանց ևս սեղանակից է լինում քահանան: Թագուորի սեղանը մինչև լոյս մնում է և մակարները անընդհատ քէֆ են անում, ուտում, խմում, պարում: Այս գիշեր բացի սովորական խաղերն ու պարերը, նաև փոքրիկ ներկայացումներ են տալիս — վեր են բերում օշիններ — օրինակ. Մի մարդ քուրքը թարս հագած, գլխին թաղիքէ քոլոզ դրած ձևանում է շահ, սրան նրան պատժում է, սիւններից կապիլ տալիս, մեղադրելով զանազան մտացածին լանցանքների մէջ, մինչև որ մեղադրուողի կինը կամ մայրը մի հաւ է բերում և ազատում: Յատուկ այս օրերի համար վարժեցնում են զամբռ շներին զօտեմարտել և մի քանի ձևեր անել և այս ժամանակ այս շահը զօտեմարտում է ալդպիսի զամբռների հետ և բազմութեանը ծիծաղեցնում: Ոմանք էլ մանրավաճառ հրէայի տարազ են մտնում, մի կապոց շալակում և մօտենում կանանց, զովում իրենց ապրանքները, անբարոյական ակնարկներ անում, սրախօսում և ծիծաղեցնում հարսնէորներին: Այսպէս ուրախ անցկացնելով, շատ ուշ, լուսաբացին ցրում են:

Թագվէրէք. — Այս ծէսը մի քանի գիւղերում տարբեր կերպով են կատարում. այսպէս Ուզունլարում և նրա շրջակայքում կիրակի առաւօտեան Թագուորի Հայրը կանչում է քահանային, խաչեղբորը և մի քանի բարեկամներ, իսկ մակարները արդէն կան ու կան: Բոլորին թէյ և ճաշ տալուց յետոյ կատարում են Թագվէրացի ծէսը: Սրանից յետոյ Թագուորը, Հարսը, խաչեղբայրը և Թագուորի Հայրը տնեցիների, քահանայի հետ դաւուլ-զուռնի առաջնորդութեամբ զնւում են դերեզմանատուն, իրենց նոր և հին ննջեցեալների գերեզմանները օրհնել տալիս, գինի ածում գերեզմանի վրայ, ողորմաթաս խմում և դարձեալ նոյն դաւուլ-զուռնի առաջնորդութեամբ վերադառնում:

Մի քանի գիւղերում էլ, ինչպէս Հաղբատ և Սանահին,

Թագուորը գերեզմանօրհնէքից յետոյ «Թագուորահորս» է գրնում. — մի գաշտում, բաւական հեռաւորութեան վրայ մի ձող են տնկում և ծալրին մի խնձոր ամրացնում: Թագուորը պարտաւոր է գնդակի մի հարուածով թռցնել խնձորը և եթէ չի կարողանում, հրացանը լանձնում է մակարներին փորձելու և «տրումն խփողին» մի խալաթ տալիս:

Վարդարուրում Թագաւորը իւր մակարների հետ ընկնում է պատահած հաւերի հետեւից և սպանում: Ոչ մի հաւի տէր զժողովում չի յայտնում, որովհետեւ գիտեն, որ փեսացուն «Թագուորահորս» է ելել:

Նոյն երեկոյեան հարսնետան բոլոր բարեկամները մի մի սեղան են ուղարկում հարսնետուն, որ բաղկացած է լինում հետեւեալ կերակրներից՝— փլաւ, հաւի չիւրթ մա, տապակած լոբի, նրանց հետ նաև մի գաւ գինի կամ մի շիշ օղի: Հարսանքատէրը հրաւիրում է սեղան ուղարկող տների բոլոր տղամարդկանց և հիւրասիրում նրանց այդ ստացած սեղանների կերակրներով. միանգամայն լիշշելով այսպէս՝

Ըէն կենայ բարեկամը,	Չալ տետալ հաւը,
Չիք չքանայ յարկամը,	Ղարու փլաւը,
Թագաւորի բարեկամ Զաքարը	Մրգերի լաւը:
Թագաւորի ուղուրին բերել ա:	Բարեկամսին բերել են,
Ծանոջը սեղան,	Միձարքաւորսին կերել են,
Կիբը քրտեղան,	Ոմենքին էլ ծերել են
Միջին ջուխտ գաւը,	Չուղողսին էլ համփերել են:

Հետեւեալ օրը, երկուշաբթի առաւօտեան, Թագուորի մօտիկ ազգականները, մանաւանդ կանայք, հրաւիրում են Թագուորի տանը «խաշ» ուտելու: Այստեղ խօսք է լինում հարսի կուսութեան մասին և ցոյց է տրուում սաւանը:

Երբ հարսը ուրիշ գիւղից են բերում, հարսանական սովորութիւնների մէջ հետեւեալ տարբերութիւններն են տեղի ունենում:

Հարսնառ. գնալիս եթէ Թագուորը բարգաւկտրէքի փամանակ որոշուած նուէրներից պակաս կամ վատ է բերել, հարսնացուի կողմի ազգայները ծեծում են Թագուորի մակարներին, թէ ինչի էք քիչ և վատը բերել:



Սուրբարար Հարսի գիւղի ազապներէ Համար Թագուորը նուէր է տանում Թխուածքներ և Հաւ, ապա Թէ ոչ սրանք կը յարձակուեն Թագուորի մականներէ վրայ և իրենց պահանջը յայտնելով կըձեռնեն նրանց:

Թագուորահայրը պարտաւոր է նախ քան Հարսը տանելը, նրա գիւղի տանուտիրոջը նուէր տալ:

Երբ Հարսն առած վերագառնում են Թագուորի գիւղը, մականներից մինը ձին քշում գնում է Թագուորենց տուն, Հէնց ձիով մտնում է սրահը և աւետիս տալիս, որ Հարսը ընտրում են: Նրա ձիու ականջից մի Թաշկինակ են կապում: Այս Համբաւարելին կոչում են ճաղուէս:

Պատկը կատարում է անպատճառ Հարսնացուի գիւղում և երբ գալիս են Թագուորի գիւղը, գիմում են եկեղեցի, իջնում ձիերից, մտնում, Համբուրում սեղանը և ապա՝ Հետի, սովորական կարգով գնում Թագուորի տուն: